

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՂԱԻՔ ԱՌԻՅԱԴՅԱՅ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԱԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՍՄԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝


www.freebooks.am


ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:




ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

ՋԵՐՄՈՒԿ ДЖЕРМУК









ՖԵՐԴԻՆԱՆԴ ԿԱԶԱՐՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԱԶԱՏՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ



ՓԵՐԴԻՆԱՆԴ ԿԱԶԱՐՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԱԶԱՏՅԱՆ

ԺԶԵՐՄՈՒԿ

**Ջերմուկ. — ուղեցույց-ալբոմ,
«Պարբերական» ԱՀՄ, Երևան 1990**

Ուղեցույցը ծանոթացնում է Հայկական ԽՍՀ Ջերմուկ առողջարան քաղաքին, որը լայն ճանաչում ունի ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև նրա սահմաններից դուրս

Փաստական հարուստ նյութի հիման վրա հեղինակները ծանոթացնում են լեռների գրկում բազմաժ, նորովի հրաշակերտված Ջերմուկ առողջարանի անցյալի, այսօրվա և նրա զարգացման հեռանկարների մասին Ուղեցույցում ներկայացվում են նաև Երևան—Ջերմուկ մայրուղու շրջակայքի պատմաճարտարապետական կոթողների մասին համառոտ տեղեկություններ:

Գիրքը նախատեսվում է զբոսաշրջիկների, հյուրերի և ընթերցող լայն շրջանների համար:

**Джермук. Альбом-путеводитель.
ИПО «Парберакан», Ереван, 1990.**

Путеводитель знакомит с городом-курортом Джермук в Армянской ССР, который хорошо известен не только в Советском Союзе, но и за его пределами.

На богатом фактическом материале авторы рассказывают о прошлом, настоящем и дальнейшем развитии раскинувшейся среди гор здравницы Джермук. В путеводителе вкратце приводятся сведения и об историко-архитектурных памятниках по дороге Ереван—Джермук.

Книга предназначена для туристов и широкого читателя.

© Ղազարյան Ֆ. Կ., Ազատյան Կ. Գ.

© Ф. К. Казарян. В. Г. Азатян.



Բարի գալուստ
Добро пожаловать

ԱՐԵՎԻ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՔԱՂԱՔԸ

Ջերմուկը Հայաստան աշխարհի այն գեղեցիկ անկյունն է, ուր նրան այցելության եկած յուրաքանչյուր ոք ականայից անսահման բերկրանք ու երջանկություն է ապրում:

Այստեղ՝ այս հրաշք-հեքիաթային բնության գրկում, ծաղիկ-ծաղկունքի շենշող աշխարհում մարդը թեթև է շնչում, նրա սիրտը լցվում է խնդությամբ, լույսով, ջերմությամբ արևով...

Ամերիկահայ մեծատաղանդ գրող Վիլյամ Սարոյանը շատ էր սիրում Ջերմուկը և իր այցելություններից մեկի ժամանակ ասել է.

— Հայաստան աշխարհը իսկական դրախտավայր է, իսկ նրա բարձր, երկնասլաց գահը Ջերմուկն է: Այստեղ առատ է լույսը, ջերմ է արևը...:

Նա ժայռաբեկորի վրա գրեց մեկ հատիկ բառ՝ «Արև»:

Ով գեթ մեկ անգամ եղել է առողջարանային այս գողտրիկ քաղաքում, երբեք չի մոռանա նրա բուժիչ ու քաղցրահամ ջրերը, թավուտ անտառները, փառահեղ ջրվեժը, ալպիական ծաղիկների բույրը, Արփա գետի արծաթափայլը:

Բարով գաք Ջերմուկ:

Ջերմուկը ձեզ կդիմավորի սիրով ու արևով:

ГОРОД СОЛНЦА И СВЕТА

Кто посещает Джермук — этот чудесный уголок армянской земли, тот испытывает бесконечное чувство восхищения и счастья.

На лоне дивной природы, в лучезарном зеленом царстве легко дышится, сердце переполняется радостью, светом, теплом, солнцем...

Великий американский писатель и армянин Уильям Сароян был влюблен в Джермук и во время одного из своих приездов сказал: «Страна Армения — райский уголок, а Джермук — его высокий поднебесный трон. Свет, тепло, солнце здесь в изобилии...». На скале крупными буквами он написал: «Солнце».


Кто хоть раз побывал в этом прекрасном курортном городе, тому никогда не забыть его целебных и вкусных вод, пышных лесов, величественного водопада, аромата альпийских цветов, серебристой ленты реки Арпа, оздоровительного воздуха...


Добро пожаловать в Джермук.

Джермук встретит вас с любовью и солнцем.



Քաղաքի համայնապատկերը Панорама города





Ն Ա Ն Ա Բ Ա Ն

Խորհրդային Հայաստանի գլխավոր դարպասը նրա մայրաքաղաք Երևանն է: Երևանի «Ջվարթնոց», «Էրեբունի» օդանավակայանները, երթուղային և ավտոբուսային կայարանները օրական տասնյակ հազարավոր մարդիկ են ընդունում: Հատկապես «Ջվարթնոց» միջազգային համարում ունեցող օդանավակայանը, որը ԽՍՀՄ-ում խոշորներից մեկն է (բացթողման հզորությունը ժամում 2100 մարդ-ուղևոր), իր երթուղիներով կապված է աշխարհի բազմաթիվ քաղաքների հետ:

Խորհրդային Միության զանազան վայրերից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից ժամանած մարդկանց մեծ մասի ծանոթությունը Հայաստանի հետ սկսվում է Երևանից:

Հայաստանի ընդհանուր պատմությունից անջատ Ջերմուկի պատմությունը ամբողջական, տպավորիչ ու հետաքրքիր լինել չի կարող: Ուստի մեր պարտքն ենք համարում ընթերցողին համառոտակի ծանոթացնել Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանին և ապա տեղափոխվել առողջարանային արձրադիր Ջերմուկ քաղաքը:

Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ի իրավահավասար տասնիմեկ հանրապետությունից է, ստեղծվել է 1920 թ. նոյեմբերի

29-ին իր տարածքով միութենական հանրապետությունների համակարգում ամենափոքրն է (29,8 հազ. քառ. կմ), մոտավորապես հավասարվում է Բելգիային կամ Ալբանիային: Սակայն բնական պայմանների, տնտեսական և մշակութային կյանքի բազմակողմանիությամբ չի զիջում տարածքով իրենից մեծ երկրներին:

Գտնվում է Անդրկովկասում, Կովկասյան լեռներից դեպի հարավ, Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում: Հյուսիսից սահմանակից է Վրացական ԽՍՀ-ին, հյուսիս-արևելյան կողմից՝ Ադրբեջանական ԽՍՀ-ին, արևմուտքից՝ Թուրքիային և հարավից՝ Իրանին:

Հայ ժողովրդի պատմության տարեգրությունը շատ է տխուր Հայոց երկրի գրեթե բոլոր նվաճողները՝ թաթարներն ու մոնղոլները, պարսիկներն ու թուրքերը երկարամյա կռիվներ են մղել, խորտակել Հայաստանի բերդերն ու ամրոցները, հրկիզել այգիները, ավերել դպրոցներն ու եկեղեցիները, գերել ու սրի քաշել բնակիչներին, կողոպտել ունեցվածքը:

1915 թ. կատարվեց հրեշավոր մի ոճիր: Արևմտյան Հայաստանում թուրքական յաթաղանը իրագործեց հայկական Մեծ եղեռնը: Իր հինավուրց հարազատ երկրից տեղահանվեց, սրի քաշվեց շուրջ երկու միլիոն անմեղ հայ: Գաղթի ճանապարհը բռնած հայերը ցրվեցին աշխարհով մեկ:

Դրությունը ծանր էր նաև Արևելյան Հայաստանում: Եվ ահա 1920 թ. նոյեմբերի 29-ին ուսա մեծ ժողովրդի անշահախնդիր օգնությամբ, Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, բազմաշարժար հայ ժողովուրդը իր հողի փրկված այս հատվածում հաստատեց խորհրդային կարգեր և հիմք դրեց նոր, սոցիալիստական պետականության: Երևանը հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք, դարձավ նրա վարչական, տնտեսական, մշակույթի և գիտության կենտրոնը:

Քաղաքը տեղավորված է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 865—1390 մ բարձրության վրա: Հիմնվել է մեր թվարկությունից առաջ 782 թվականին:



ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂՈՎ ԴԵՊՐ ԶԵՐՄՈՒՎ

Օդանավի փոքրիկ լուսամուտից երևում են գյուղեր, բնակատեղիներ, վարելահողեր, փոքրիկ կանաչ գոտիներ, իսկ ամենաշատը մերկ լեռներ, լեռներ ու լեռներ..

Ասում են, երբ աստված ստեղծեց ցեղերին ու ազգերին և սկսեց տարածքներ բաժանել նրանց, մինչև հերթը հային հասավ, բաժանված էր ամբողջ աշխարհը և մնացել էր մի քարքարոտ հողակտորը միայն:

— Ի՞նչպես պետք է ապրեք այս չոր ապառաժների վրա, — կարեկցանքով հարցնում է աստվածը:

— Ոչինչ, տեր, դու տուր, մենք մի կերպ գլուխներս կպահենք, — պատասխանում են հայերը:

Այդ օրվանից ավանդությանը հարազատ հայ ժողովուրդը մետր առ մետր մշակում է իրեն բաժին հասած քարքարուտները, դարձնում բուրաստան ու այգեստան:

Բարձունքից երբ նայում ես Հայաստան աշխարհին, ամենուրեք ծալք-ծալք լեռներ են՝ խրոխտ գագաթներով, հազվադեպ կապույտ լճեր, ուրվագծվող լեռնային գետեր, անտառահատվածներ, ընդերքում՝ անմահական ջրեր, երկաթ, ոսկի, պղինձ, մոլիբդեն..

Եւայում ես այս հինգավուրց մի բուռ օրհնված հողին ու լարմանում, որ իր մեջ այդքան հրաշքներ ունի պահած:

Բայց մեր ճանապարհին բացվող համայնապատկերի գեղեցկությունը վայելելու, պատմաճարտարապետական անկրկի հուշարձաններին ծանոթանալու նպատակով նախընտրենք պտորուսը:

Հայագգի ծովակալ Իսակովի անունը կրող պողոտայի վրա գտնվում Երևանի կենտրոնական ավտոբուսային կայարանը, լստեղից ամեն օր ուղևորներով լեցուն ավտոբուսները ուղղույուն են վերցնում դեպի Ջերմուկ:

Երևան—Ջերմուկ երթուղին մի թանգարանի է նման: Այս անապարհին դուք կհանդիպեք հայկական հին մայրաքաղաքի փլատակների, վանքերի ու եկեղեցիների, տաճարների, ուզում նրբագեղ խաչքարերի, անդնդախոր կիրճերի, երկնքի սպույտը մխրճվող լեռների, սարերի լանջերին ծվարած բնավայրերի: Սակայն այս ամենի թագն ու պսակը Արարատ լեռիական գեղանի լեռն է, որը իր ձյունափառ գագաթներով տնում է ձեր աջում, ճանապարհի մեծ մասը հարազատի ս ուղեկցում ձեզ և միայն Ջերմուկ հասնելուց առաջ, մի քակիլումետրի վրա, անհետանում տեսադաշտից: Բայց դուք դեմ սկսում եք կարոտել, ուզում եք նորից վայելել այդ վեհիստ լեռան հմայքը:

Մեծ Արարատի գագաթի բարձրությունը 5165, իսկ փոքր՝ 3925 մետր է, զբաղեցրած տարածքը՝ 1200 կմ², գագաթների միջև ընկած հեռավորությունը՝ 12 կմ:

Ավտոմեքենան կտրում-անցնում է Երևանի մի շարք թատևասեր և դուրս գալիս Արտաշատյան խճուղի: Մայրուղու ս կողմում, 21-րդ կիլոմետրում, Մասիսի շրջանն է, համաշխարհային շրջկենտրոնով, երիտասարդ, բարեշեն մի ավան, իր մշակութային ու հասարակական կենտրոններով:

Ուղևորի հայացքի առաջ փռվում է Արարատյան չքնաղ փոթի ընդարձակ տարածքը՝ այգեստաններն ու մրգաստանները, խաղողի անվերջանալի այգիները:

Աշխարհում խաղողի հնագույն ծննդավայրերից մեկը Հատանն է, քարերի ու լեռների երկիր Հայաստանը:

Մեր ճանապարհի 31-րդ կիլոմետրում Արտաշատ քաղաքն անուանումն շրջանի վարչական կենտրոնը, իր բարեկարգ սերքառատ գյուղերով: Սա հանրապետության այգեգործա-



Արարատ լեռը
Гора Арапат

կան և պտղաբուծության խոշոր շրջաններից է, զարգացող գյուղատնտեսությամբ, արդյունաբերությամբ ու հարուստ մշակույթով:

Պատմական հիշարժան իրադարձություններ են տեղի ունեցել այս հողի վրա: Արտաշատը մ. թ. ա. II և մ. թ. V դարերում եղել է Հայաստանի մայրաքաղաքը: Գտնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ոստան հայոց գավառում, Երասխ և Մեծամոր գետերի միախառնման տեղում, Խորվիրապի բլուրների վրա (այժմյան Արտաշատ քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք, Արարատի շրջանի տարածքում):

Արտաշատ քաղաքը կառուցվել է Արտաշես Ա-ի օրոք մ. թ. ա. 180-ական թվականներին, երբ Հայաստանում վերելք էր ապրում քաղաքային կյանքը: Արտաշատը ունեցել է պաշտպանական հուսալի համալիր և միջնաբերդ՝ արքունական շքեղազարդ պալատով, գանձարանով և մաքսատնով: Լինելով հելլենիստական մշակույթի կենտրոն, պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, Արտաշես Ա-ի օրոք այստեղ եղել են

Անահիտ—Արտեմիս և Տիր—Ապոլոնի տաճարները՝ նրանց պղնձաձուլ ոսկեզօծ արձաններով: Մ. թ. ա. 53-ին, Արտավազդ Բ-ի օրոք Արտաշատում ներկայացվել է Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

Արտաշատի շրջանի տարածքում է գտնվում Դվինը: Բաղաքը փոխած է եղել ընդարձակ տարածության վրա, ունեցել է 100 հազար բնակչություն: Մեր թվարկության IV—V դարերում եղել է Հայաստանի մայրաքաղաքը, կործանվել է երկրաշարժից՝ 893 թվականին:

Ավտորուսը սլանում է առաջ: Երթուղու ձախ մասում, մելճանապարհի 48-րդ կիլոմետրում, Արարատի շրջանն է, Արարատ քաղաքատիպ ավանային կենտրոնով: Շրջանը կազմավորվել է 1950-ական թվականներին: Արարատի շրջանը նույնպես հանրապետության այգեգործական ու պտղաբուծության խոշոր կենտրոններից է: Այստեղ արագ թափով զարգանում է արդյունաբերությունը՝ հիմնականում ցեմենտի արտադրությունը:

Արարատից աջ, մի քանի կիլոմետրի վրա, Փոքր Վեդու մոտակայքում հառնում է հայ ժողովրդի հնագույն և նվիրական սրբավայրերից մեկը՝ Ս. Խորվիրապի վանքը: Այն առնչվում է

Ս. Խորվիրապ վանքը (XVII դ.)
Храм св. Хорвирапа (XVII в.)



III դարի վերջին և IV դարի սկզբին Հայաստանի կրոնապատմական վերափոխության խոշոր երևույթի՝ քրիստոնեության մուտքի և արմատավորման հետ: Ս. Խորվիրապի վանքը գըտնվում է Մայր Արաքս գետի ձախակողմյան ափին, Արարատ լեռան հանդիպակաց բլրաշարքի վրա: Բնությունը ինքը կարծես Խորվիրապն ու Արարատը կողք-կողքի է ստեղծել, քանզի այդ երկուսի միասնությամբ է հայ ժողովուրդը խորհրդանշել իր հավերժությունը:

Ժամանակին Ս. Խորվիրապը հանդիսացել է քաղաքական տարապարտյալների բանտ-աքսորավայր: Այստեղ է բանտարկվել նաև Ս Գրիգոր Լուսավորիչը, որը հանդգնել էր, հակառակ Տրդատ Գ Արշակունի թագավորի կամքին ու հրամանին, չերկրպագել հայրենի հեթանոս աստվածներին: Թեև նա առաջին հայ քրիստոնյան չէր, սակայն նրա ժամանակ և առավելապես նրա շնորհիվ քրիստոնեությունը 301 թվականին պետական կրոն հռչակվեց ամբողջ Հայաստանում, և նա դարձավ առաջին Հայոց կաթողիկոսը:

Խորվիրապը վիթխարի դեր է կատարել կրթական-մշակութային գործը Հայաստանում զարգացնելու ուղղությամբ. Այստեղ գործել է առաջադիմական բարձրագույն դպրոց, ուր իրենց մասնակցությունն են բերել խոշոր գործիչներ Վարդան Արևելցին, Ներսես Մշեցին, Հովհաննես Երզնկացին, Գրիգոր Բալուեցին, Գևորգ Սկևռացին (Լաբրոնացի), Գևորգ Բջնեցին՝ իրենց քառասուն աշակերտներով: Այս դպրոցից մեզ են հասել XIII դարում ընդօրինակված մեկ տասնյակից ավելի արժեքավոր ձեռագրեր, որոնք այսօր պահպանվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում և դասվում նրա անմահ գանձերի շարքը:

Խորվիրապում այժմ կանգուն է XVII դարի Ս Աստվածածին գլխավոր եկեղեցին: Պահպանվել է նաև Գրիգոր Լուսավորչի՝ Վիրապի վրա XIII դարի կառուցված մատուռը: Այսօր էլ մեծ է այն զբոսաշրջիկների և հյուրերի թիվը, որոնք մեծ հետաքրքրությամբ ծանոթանում են ճարտարապետական այս հուշարձանին:

Շարունակում ենք ճանապարհը:

Սլացիկ բարդիների ու ծաղիկներով երիզված մայրուղով ավտոբուսը շարժվում է առաջ, հասնում Երասխ (Արաքսի նախկին անունը): Ուղիղ ճանապարհը տանում է դեպի Իլի-

Վրացական շրջան (նախկինում Նորաշեն), Նախիջևան քաղաք: Երկու մեր ավտոբուսը Երասխից շրջվում է ձախ և ուղղություն վերականգնում դեպի Եղեգնաձորի շրջան

Հասարակարկով ճանապարհի դժվարությունները, կեռման անկեղծան անվաճելով բարձրությունները, ավտոմեքենան հասնում է Սովետաշեն (մինչև 1948 թ. Չանախչի): Գյուղը փրկում է Արածո գետի վերին հոսանքի հովտում: 1950-ական թվականներից գտնվում է Արարատի շրջանի կազմում: Այն արտոնական Վայոց ձորի հնագույն գյուղերից է, այն տարածվել է որ իր մեջ է ներառում նաև Ջերմուկ առողջարանային կայանը: Այսօր գյուղը հայտնի է որպես հայ մեծատաղանդ լուսնատեղծ Պարույր Սևակի ծննդավայր:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ (1924—1971 թթ): Ավարտելով Երևանի փոստային համալսարանը և ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ստախրանտուրան, աշխատեց «Ավանգարդ» թերթի խմբագրությունում, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության մշակութային կապի հայկական ընկերությունում, «Գրական թերթում» 1951 թվականին ուսանել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում, ավարտելուց հետո գրասխոսել նույն բուհում 1963-ից Պ. Սևակը ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում ավագ գիտաշխատող էր, 1966—1971 թթ աշխատել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար

Հայ հին ու ժամանակակից գրականության, գրաքննադատության, լեզվաշինության հարցերը հմուտ գրականագետ ու հրատարակախոս Պ. Սևակի ուշադրության կենտրոնում էին: «Մարտի Նովա» մենագրությամբ նա միանգամից արժանացավ լուսնախրական գիտությունների դոկտորի աստիճանի

Պարույր Սևակի բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Ամահները հրամայում են» (1949 թ.), հավաստեց հեղինակի ինքնատիպությունը, ընդգրկումների լայնությունը, ստեղծած թարմությունը, լեզվական հարստությունը: Այդ գիրքը վերաբերում էր խորհրդահայ պոեզիա է մուտք գործել տաղանդատու մի բանաստեղծ. Հետագայում՝ «Սիրո ճանապարհը», «Նուրբ թևեր հետ» և մյուս ժողովածուները ավելի տարածեցին արվեստի համրավը

Պ Սևակը նորարար բանաստեղծ էր:

Պոետի քաղաքացիական ազնիվ կիրքը, հասարակական

հույժ կարևոր ու այրող խնդիրների հետ ունեցած սերտ առըն-
չությունը, ստեղծագործական տքնանքն ու չթուլացող որո-
նումները նրա տաղանդի բնորոշ առանձնահատկություններն
էին, որոնք իրենց ողջ ուժով դրսևորվեցին հայ պոեզիայի
կոթողային ստեղծագործություններից մեկի՝ «Անլուելի զան-
գակատուն» հայրենաշունչ պոեմի մեջ (նվիրված է անմահ
Կոմիտասին)

Բանաստեղծական հուժկու պոռթկումով, պատմափիլիսո-
փայական խոր իմացությամբ, ուրույն միջոցներով ստեղծված
բարձրարվեստ այդ գործը, որը ժամանակին արժանացավ
ՀԽՄՄ սլետական մրցանակի, հայ ժողովրդի կենսունակությանն
ու վերածննդին ծոցված մի ոգեշունչ հիմն է

Հայ ազգային պոեզիայի փայլուն ստեղծագործություններից
են նաև Պ Սևակի «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լուս» խոհա-
փիլիսոփայական ժողովածուները

Ամենագոր բնությունը շոալորեն ու զարմանահրաշ կարո-
ղություններով, բարեմասնություններով էր օժտել Պ Սևակին.

Վիթխարի է, խոր ու բեղուն այն ակոսը, որը մեծ բանաս-
տեղծ-գիտնականը թողեց հայ մշակույթի հոգևոր գանձարա-
նում

Սիրված բանաստեղծի գրքերը թարգմանվել են աշխարհի
տասնյակ լեզուներով:

Կարճ տևեց Պ Սևակի գեղեցիկ կյանքը Ապրեց ընդամե-
նը 47 տարի, զոհվեց ավտոպարից, մեր ճանապարհի այն
հատվածում, ուր կախվեցված է հուշաքար, ի հավերժացումն
հայ բանաստեղծի, հիմնադրվել է Պարույր Սևակ գյուղը:

Սովետաշեն գյուղի սկզբնամասի ասֆալտապատ ճանա-
պարհը տանում է դեպի Սևակի հայրենական տուն, դեպի Սևա-
կի գերեզմանը՝ ամփոփված նրա սիրած խնձորենու այգում,
իսկ կողքին բանաստեղծի տուն-թանգարանն է, շատ-շատերի
համար սրբավայր և ուխտատեղի

Ավտոբուսը հոնդյունով հաղթահարում է բարձունքները և
դուրս գալիս Ելփին գյուղի մոտ Հրաշալի մի դիտակետ: Մեր
առջև բացվում է Վայոց ձորի վիթխարի տեսարանը, անընդ-
գրկելի մի տարածք՝ իր լեռներով ու հովիտներով:

Շարունակելով մեր ճանապարհը դեպի Ջերմուկ, հասնում
ենք Արենի գյուղը Մեր դիմաց, բարձունքի վրա, Արենիի
Ս. Աստվածածին եկեղեցին է, կառուցված 1321 թ. (ճարտա-

ուսպետ, քանդակագործ և մեծատաղանդ մանրանկարիչ Մովսիկ)

Ահա և ավտորուսի աջ կողմում հայտնվում է Արփան՝ Վալդի ձորի ամենամեծ գետը:

Գետի հոսանքին հակառակ, ժայռոտ կիրճով գնում ենք սուս Ապառաժների իսկական թագավորություն է այստեղ, յուրաքանչյուր քար, լեռ, բլուր կախարդական մի պատկերի է նմանվում և թվում է, թե ուր որ է նրանք կենդանություն կրստանան ու իրենց հզոր ցատկով կկործանեն ամեն ինչ:

Արենի գյուղից մի քանի կիլոմետրի վրա աջ կողմի ձուլակիջյան ճանապարհը տանում է դեպի Նորավանք, ճարտարապետական հրաշալի մի համակառույց, որի համբավը վաղուց դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Ձորից վերև, վառ պարիս տվող հսկա լեռան լանջին այսօր էլ դեռ կանգուն է յրավանք դամբարան-եկեղեցին, որը 1339 թ. կառուցել են ռուսադանդ ճարտարապետներ Մովսիկն ու Սիրանեսը:

Անցնում ենք ճարտարապետական հիմնավորց կոթողներով բուստ Ալայազի գեղատեսիլ ձորը, դուրս գալիս Եղեգնաձոր շրջկենտրոն Այստեղից ոչ հեռու Կաձոր գյուղն է, իր հրուկավոր Թանահաթի վանքով: 1280 թվականին այստեղ գործել էր արձրագույն դպրոց՝ Գլաձորի համալսարանը: Հայ ժողովրդի դպրության պատմության մեջ Վայոց ձոր պատմական խոտում գործող այս համալսարանը նախորդ դարերի և իր մասնակի հայոց բարձրագույն դպրոցներից ամենանշանակալի էր Ուսումնական այս կենտրոնը իր ժամանակին եվրոպական մակարդակի համալսարան էր: Այստեղ ուսուցանվում էին լեզու և գրականություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն, լուսժշտություն, գրչության արվեստ, մանրանկարչություն, կոտորական արվեստ, բժշկություն, աստղագիտություն:

Գլաձորի համալսարանը (ուսուցչապետ՝ Եսայի Նչեցի) հայ ժողովրդի գիտական մտքի գագաթը լինելով, միաժամանակ յուրատեսակ քաղաքական կենտրոն էր, որը պայքարում էր ստանուն մայրենի լեզվի և մշակույթի պահպանման: Այն հիշվում էր որպես «Երկրորդ Աթենք պանծալի», «Մայրաքաղաք Կոտայքի», «Գերհոջակ համալսարան» և այլն:

Սակայն ինչպես միջնադարի և ավելի վաղ շրջանի հայ մի յուր դպրոցներ, Գլաձորի համալսարանը նույնպես երկար չկարողացավ կայուն գոյություն պահպանել: Դեռևս 1860-ական թվականներին այն ավերվեց թշնամի-

ների վայրագ ասպատակությունների հետևանքով և փակվեց: Այնուհետև ստեղծվեց Տաթևի համալսարանը, որի համբավը մեծացավ հատկապես Գլաձորի համալսարանի սան Որոտնեցու աշակերտ Գրիգոր Տաթևացու օրոք:

1980 թվականին Խորհրդային Միությունը և աշխարհի առաջադեմ մարդկությունը մեծ շուքով նշեցին Գլաձորի համալսարանի հիմնադրման 700 տարին:

Եղեգնաձորը հիմնականում այգեգործական, պտղաբուծական, անասնապահական շրջան է, ուր արագ թափով զարգանում է նաև արդյունաբերությունը:

Անցնում ենք առաջ, հետևում թողնում Եղեգնաձորի շրջանի գյուղերից մեկը՝ Մալիշկան և մտնում Վայքի շրջկենտրոն, որի վարչական տարածքում գտնվում է Ջերմուկը:

Վայք ավանը փոխած է Վայոցասարի և Թեքասարի ստորոտին, Արփա գետի վերին հոսանքի ավազանում Ավանում կառուցվել են բազմաթիվ բնակելի, վարչական, մշակութային, հասարակական, արդյունաբերական, մանկական, առողջապահական շենքեր ու շինություններ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կաթնամթերքների, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ և այլն: Այստեղ բուռն կերպով զարգանում են մեքենաշինությունը, շինանյութերի, հանքային ջրերի, թեթև և սննդի արդյունաբերությունը: Օրեցօր աճում է աշխատավորության կենսամակարդակը, կատարվում են սոցիալ-տնտեսական մեծ վերափոխումներ:

Արփայի ափով է սլանում մեր ավտոբուսը: Յուրաքանչյուր կեռամանից նորանոր տեսարաններ են բացվում: Կուտակ-կուտակ լեռնազանգվածներ ու անդնդախոր ձորեր: Լեռնային արագահոս գետը գեղատեսիլ բնապատկերներ է ստեղծում:

Ուղիդ՝ մայրուղին տանում է դեպի Սիսիան ու Գորիս, բայց մենք ձախով ուղղություն ենք վերցնում Ջերմուկ.

Ի դեպ, Ջերմուկ մտնելու համար երկու ճանապարհ կա, մեկը ձորով՝ գետի գեղատեսիլ ափով, «Ջերմուկ» հյուրանոցի մոտով, իսկ մյուսը, գրեթե լեռների գագաթներով, քաղաք է մտնում ձախափով: Մեր առջև իր ողջ հմայքով հառնում է Ջերմուկ քաղաք-առողջարանն իր աջ ու ձախ ափերով:

Ահա մենք գեղանի Ջերմուկում ենք, Միութենական նշանակության առողջարանում իսկ այժմ ծանոթանանք նրա աշխարհագրական դիրքին և բնակլիմայական պայմաններին:

Ջերմուկ առողջարանային քաղաքը գտնվում է Հայկական ԽՍՀ-ի հարավ-արևելյան մասում, Արփա գետի վերին հոսանքում, Վայքի շրջկենտրոնից 34 կմ հյուսիս-արևելք, Երևանից 173, իսկ Երևան—Բաքու երկաթուղու Երասխ կայարանից 108 կմ հեռավորության վրա

Բարձրությունը ծովի մակերևույթից 2000—2080 մ է:

Սարահարթը, որի վրա տեղավորված է առողջարան-քաղաքը, երեք կողմից շրջապատված է Վարդենիսի և Սյունյաց ալպիական փարթամ բուսականությամբ ու անտառապատ լեռներով, որոնց բարձրությունը հասնում է 2500—3000 մ: Բաղաքի միջով հոսում է հանրապետության ջրառատ գետերից մեկը՝ Արփան, որը քաղաքը բաժանում է երկու մասի: Արփա գետը սկիզբ է առնում լեռնային աղբյուրներից, խորունկ

կիրճով կիսում է գրեթե ամբողջ Վայոց լեռնապարը, իր մեջ առնելով բազմաթիվ գետակների ջրերը և Նախիջևանի ՌԽՍՀ տարածքում միանում է Մայր Արաքսին

Արփա գետը հայտնի է իր համեղ ձկնատեսակներով, ստորին հոսանքներում՝ կողակը, իսկ վերին հոսանքներում, սառնորակ աղբյուրների ակունքներից մոտիկ՝ կարմրախայտը, որը ցան հաճախ իշխանաձուկ են անվանում

Արփա գետի մեջ է թափվում աղբյուրներից գոյացած Ջերմուկ գետակը, որն իր գետաբերանի մոտ առաջացրել է ավելի քան 84 մետր բարձրություն ունեցող, անկրկնելի հրացուքով մի ջրվեժ, հազվագյուտ հետաքրքիր մի տեսարան, որն ավելի հմայիչ ու հեքիաթային է դարձնում քաղաքի համայնապատկերը

Ջերմուկի օդը բացարձակ մաքուր է, գերժ փոշուց, հազեցած ծաղիկների անուշ բուրմունքով Քաղաքի կլիման տիպիկ լեռնային է։ Ամառն այստեղ զով է, մեղմ եղանակով ձմեռը երկարատև, ձյունատառ, բայց պարզկա և ոչ սաստիկ ցուրտ, առանց քամիների օրերով Ամենացուրտ ամսվա օդի միջին ջերմաստիճանը — 8,1 աստիճան է, ամենատաք ամսում սեպտեմբերի սյունը ցույց է տալիս 14—16 աստիճան, բացարձակ առավելագույնը՝ 32, իսկ բացարձակ նվազագույնը — 35 աստիճան։ Մթնոլորտային տեղումների քանակը տարվա ընթացքում կազմում է 800 մմ, մթնոլորտային ճնշումը հասնում է 600 մմ-ի, իսկ արևափայլի տարեկան տևողությունը՝ 2300—2400 ժամի։

Ջերմուկը ջրառատ վայր է Արփայի և նրա աջակողմյան Ջերմուկ վտակից բացի, քաղաքի տարածքում բխում են սառնորակ ու տաք աղբյուրներ, որոնք օգտագործվում են խմելու համար։ Սակայն Ջերմուկը հատկապես հայտնի է իր բուժիչ, թվով շուրջ 40 տաք, հարուստ բաղադրությամբ աղբյուրներով, որոնց ջերմությունը հասնում է 56—64 աստիճանի և բուժում է ամենազանազան հիվանդություններ

Արևոտ օրերի գերակշռությունը, անմահական բուժիչ ջրերը, կլիմայի մեղմությունը, ուլտրամանուշակագույն ճառագայթների հարստությունը, անտառապատ ու ծաղկառատ լինելը, օդի մաքրությունը, չափավոր խոնավությունը նպաստում են Ջերմուկը առաջնակարգ առողջարանային, ակտիվ հանգստի ու ամառանոցային ճանաչված քաղաք համարելու



Ջերմուկը գտնվում է պատմական Վայոց ձորում, այսպես Վայքի շրջանի վարչական տարածքում Վայոց ձորը կոչվել է նաև Եղեգնաձոր կամ Եղեգյաց ձոր Սյունիքի նշանավոր գավառներից մեկի՝ Վայոց ձորի վարչատերիտորիալ սահմանները քիչ են փոփոխվել, այն ընդգրկել է այսօրվա Եղեգնաձորի և Վայքի շրջանները

Ըստ Ղևոնդ Ալիշանի Վայոց ձոր անունը առնչվում է 40 օր տևող երկրաշարժի հետ Ահա թե ինչ է գրել մեծանուն գրողն ու ազգագրագետը.

«Երկիրն ահեղ դողոցով անդունդներից բարձրանում էր վեր և այնտեղ, իբր ծովի ալիք փշրվում էր: Լեռները տապալվում էին, պատերը հիմքից քանդվում, տուն ու գեղեցիկ ապարանքները բնակիչների համար գերեզման էին դառնում: Աղբյուրները կտրվում էին: Գետերը կորչում, գետինն ամեն տեղ դողում էր: Մարդկանց ձայնը լսվում էր անդունդներում և օդում: «Վայձոր» կենդանի կորան 10 հազար մարդ, այդ պատճառով էլ կոչվեցավ «Վայոց ձոր»:

Սակայն Վայոց ձորի անվան առաջացումը, ինչպես հաստատում են գիտնականները, ունի էթնիկական ծագում: Այս-

տեղ հնում բնակվել են «Բիա» ցեղախմբին պատկանող մարդիկ: Դարերի ընթացքում «Բիա» անվանումը հնչյունափոխվելով դարձել է վայր, ապա միանալով հայերեն ձոր բառի հետ և ընդունելով գրաբարյան «ոց» վերջավորությունը՝ ստացել է Վայոց ձոր բաղադրյալ հատուկ անունը:

Խորախոր անդունդների, ահասարսուռ կիրճերի, մերկապար լեռնաօղակների երկիր է Վայոց ձորը: Այստեղ ամեն քայլափոխում հանդիպում ենք բազմադարյան քաղաքների ավերակների, կիսավեր ու կանգուն վանքերի, իսկ քարանձավներում կարելի է տեսնել նախնադարյան մարդու հետքեր և օջախների քարացած մոխիր:

Վայոց ձորը բնակավայր է եղել քարեդարյան ժամանակներից, ուր կյանքը հարատևել է առանց ընդհատումների: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նախամարդու իրեր՝ մուրճ, սղոց, դանակ, բրոնզե դարին վերաբերող իրերից՝ դաշույններ, ճարմանդներ, ապարանջաններ, մատանիներ և այլն:

Վայոց ձորի ժայռերին հայտնաբերվել են բազում փորագրություններ, որոնք պատկերում են որսորդական տեսարաններ, զանազան կենդանիներ և այլն: Ժայռապատկերներում հաճախ են հանդիպում այծերը, որոնք «այծագրեր» անունն են ստացել:

Հայ մատենագրության մեջ Վայոց ձորը առաջին անգամ հիշատակվում է պատմահայր Մովսես Խորենացու մոտ (մ թ. V դ.) Վարդանանց ազատագրական շարժման առնչությամբ, որի ղեկավար գործիչներից է եղել Հովսեփ Վայոցձորյի կաթողիկոսը: Վերջինս Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտներից էր, որը հայկական գրերի գյուտից հետո առաջին դպրոցները բացեց Վայոց ձորում:

Ըստ պատմագրի Մ Մաշտոցը եղել է Սյունիքում և Վայոց ձորում, ուր լուսավորչական մեծ գործեր է կատարել:

Վայոց ձորը Սյունիք նահանգի ամենամեծ ու բազմամարդ գավառներից էր, որը միառժամանակ եղել է նաև նրա վարչական կենտրոնը:

Վայոց ձորը հարավից սահմանակցել է Սյունիքի Ճահուկ, Լախճվան և Այրարատի Շարուր, արևմուտքից՝ Այրարատի Լրաժ, Ուրծաձոր, հյուսիսից՝ Սյունիքի Գեղարքունիք և Սողք, արևելքից՝ Արցախի Վայկունք և Սյունիքի Ծղուկք գավառներին:

Նշանավոր լեոնագագաթներից են Գեղասարը, Սուլեմասարը, Վարդենիսը, Սանդղաքարը, Գորգասարը, Հարսնասարը և այլն: Լճերից հայտնի են Սևակը, Ջուխտակը, Ճմալիճը, Հրեշտակալիճը: Այստեղ զարգացած է եղել այգեգործությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը. Ընդերքը հարուստ է արծաթով, կապարով, ցինկով, զանազան շինանյութերով և այլ օգտակար հանածոներով Վայոց ձորով են անցել Դվին—Պարտավ և Դվին—Շաղատ ճանապարհները Դեռևս Սարգուր Բ-ի օրոք (մ. թ. ա. 764—735 թթ.) Վայոց ձորը ներառվել է Ուրարտուի գերիշխանության ոլորտը: Մ. թ. ա. XI դարում մտել է Երվանդունիների, մ. թ. 189-ին՝ Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության մեջ Վայոց ձորը մ. թ. առաջին դարում եղել է Սյունիքի, V դարում՝ Հայկական մարզպանության կազմում, 990—991 թթ անցել է Անիի թագավորությանը, XII—XIII դդ. Ջաքարյանների իշխանությանը և այսպես մինչև 1920 թ.:

Մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը Վայոց ձորը բազում տերեր է ունեցել՝ ենթարկվել է Թավրիզին, Նախիջևանի խանությանը, 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով միացվել է Ռուսական կայսրությանը, ենթարկվել Թիֆլիսին, եղել է Երևանի նահանգի կազմի մեջ և այլն:

Չնայած այս հանգամանքին Վայոց ձորի ստեղծագործ ժողովուրդը միշտ էլ շեն է պահել իր երկրամասը, զարգացրել իր հոգևոր ու մշակութային կյանքը:

Վայոց ձորում են գտնվում պատմաճարտարապետական հույակերտ հուշարձաններ Նորավանքը, Գնդեվանքը, Շատիվանքը, Սելիմի քարավանատունը, Կապույտ բերդը (Սմբատաբերդ), Ցախածքարը, Հրաշկաբերդը և շատ ուրիշ կոթողներ, որոնց թիվն անցնում է հազարից: Սրանք իրենց կառուցողական բարձր արվեստով զարմանք ու հիացմունք են պատճառում դիտողին, ուսումնասիրողի առջև բացում իրենց բազմաձև շերտերում խնամքով պահպանված գաղտնիքները և նոր լույս սփռում անցած-գնացած դարերի հետաքրքիր պատմության վրա:

Ջերմուկը որպես բնակատեղի և հանգստավայր, նույնքան հին է, որքան Վայոց ձորի լեոնաշխարհը: Չնայած միջնադարյան հայ մատենագրության մեջ XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի կողմից Ջերմուկը հարկատու գյուղերի ցանկում մի

ունգամ է միայն հիշատակվում, սակայն այդ արձանագրու թյունը հավաստում է Ջերմուկը գավառի մյուս գյուղերի համեմատությամբ հին ու մեծ լինելու փաստը.

Ջերմուկի տարածքում այսօր էլ պահպանվել են ամրոցի պարսպի փլատակները՝ անտաշ որձաքարերով ու առանց շաղախի, որը հատուկ է Սյունյաց աշխարհի ամրոցների հնագույն կառուցածներից, ոճերին ու եղանակներին: Ջերմուկի ամրոցը կառուցվել է Արտաշեսյան ժամանակաշրջանում, մ. թ. ա. 189 թ., իսկ գյուղը անհամեմատ ավելի վաղ շրջանում է հիմնադրվել.

Ջերմուկի ջրերը զանազան հիվանդություններ բուժելու հուսալի միջոց են եղել անհիշելի ժամանակներից. Ըստ պատմական աղբյուրների Ջերմուկը Սյունյաց գահերեց իշխանների ամառանոցն է եղել Այդ է վկայում Սյունյաց Սոփի իշխանուհու կողմից Ջերմուկի մոտ 936 թ ճարտարապետական հուշակերտ համալիրի՝ Գնդեվանքի կառուցումը: Այդ առթիվ իշխանուհին պատկերավոր է արտահայտել իր միտքը.

«Անակն մատանի էր Վայոց ձորը, ես շինեցի սա և իբրև ակն դրեցի վրա»:

Պատմական Ջերմուկը կառուցվել է Արշակունյաց տիրապետության օրոք (մ. թ. I դ.), այն եղել է Սյունյաց թագավորների և Օրբելյան իշխանատան ամառանոց-բուժավայրը:

Վկայություններ կան այն մասին, որ կտրելով լեռնային դժվարանց կածանները, կիրճերն ու ձորերը, մարդիկ այստեղ էին գալիս ձիերով ու ջորիներով և գետափնյա փոսորակներում, հանքային տաք ջրերում խմբերով լոգանք ընդունում:

Որ հնում Ջերմուկի հանքային ջրերը օգտագործվել են բուժիչ նպատակներով, այդ մասին են վկայում քարաշեն լոգանքատեղիները: Այսօր էլ դրանցից մեկը պահպանվում է որպես պատմական հուշարձան և կոչվում է Պրիստավի լողավազան.

Դարեր շարունակ Ջերմուկի անմահական բուժիչ ջրերը հոսել են աննպատակ ու անօգուտ: Հայոց երկրի վրա ասպատակությունները քայքայել են երկիրը, սրի քաշել մարդկանց, հրդեհել շենքերն ու այգիները, թալանել ունեցվածքը: Այս պայմաններում բնականաբար երկրի ծաղկման, կառուցապատման մասին խոսք լինել չէր կարող.

17-րդ դարում Վայոց ձորը նվաճվեց Շահ Աբբասը կողմից և 1604 թ. օգոստոսին Շահի հրամանով տեղահանվեց ողջ

բնակչությունը Սրի և մտրակների հարվածների տակ բազմահազար հայ բնակչությունը քշվեց Պարսկաստան. Դեպքերի ականատես պատմիչ Առաքել Դավրիժեցին վկայում է.

«Շահ Աբբասը լուր է ստանում, որ Վայոց ձորում տեսել են կանգուն մնացած մի խրճիթ և մի կատու»:

Գազազած Շահը հրամայում է վառել խրճիթը և սպանել կատվին:

Պարսկական բանակի և հայ գաղթականների քարավանները թալանելու նպատակով թուրք հրոսակախմբերը վայրագաբար հետապնդում էին նրանց Այս տեղահանությունից հետո է, որ Վայոց ձորի ամայացած բնակավայրերում հաստատվեցին մահմեդական ցեղեր

Հայաստանի այս հատվածի պատմական ուշագրավ իրադարձությունները լավ է ներկայացրել անվանի արձակագիր Վլադիմիր Հարությունյանը Վայոց ձորի պատմությանը նվիրված վեպերում

Վայոց ձորում ծանր, մղձավանջային վիճակը շարունակվում էր մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելու պահը (1828 թ.) 1830 թ. Հայաստան է ժամանում ոռու ինժեներ-երկրաբան Գ Վոսկոբոյնիկովը, որը սկսում է Ջերմուկի ընդերքի երկրաբանական և ջրերի բաղադրության և հատկությունների ուսումնասիրությունը. Նա իր հետազոտությունները Ջերմուկի մասին (1831 թ.) տպագրում է «Լեռնային հանդես» ամսագրում, իսկ ավելի ուշ՝ (1855 թ.), «Կովկասյան օրացույց» ամսագրում

Գ Վոսկոբոյնիկովի աշխատությունները առաջին գիտական խոսքն էին Ջերմուկի մասին, սակայն դրանից գրեթե ոչինչ չփոխվեց Ջերմուկում շարունակում էին բուժվել ու հանգստանալ միայն պաշտոնյաներն ու հարուստները, որոնք այս հրաշալի բնաշխարհում ունեին իրենց սեփական ամառանոցներն ու լողավազանները:

Ջերմուկի հանքային բուժիչ ջրերը աշխատավորության սեփականությունը դարձան միայն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո.

1925—1935 թվականները վճռորոշ եղան առողջարանը մանրակրկիտ ուսումնասիրելու, նրա գործունեությունը պետական հիմքերի վրա դնելու ի նաստով Այստեղ եկան խոշոր մասնագետներից կազմված տարբեր հանձնաժողովներ, որոնց

կազմում էին պրոֆեսորներ՝ Լ Լուկանցիսյանը, Գ Մեդնիկյանը և Մելիք-Ադամյանը, առողջապահության այն ժամանակվա ժողովում Գ Ղևոնդյանը, ինժեներ Ա Ալվազյանը, Ա. Ղամբարյանը և ուրիշներ

Ջերմուկ առողջարանի զարգացման պատմության մեջ կանոնադրիչ է խաղացել նշանավոր կուրորտաբան-պրոֆեսորներ Լ Ալեքսանդրովի, Ս Նալբանդովի, Վ Դիկի, Ա Մելիք-Ադամյանի, Ա Հակոբյանի և այլոց 1934 թվականի հանձնախմբի ժամանակում որոնք հաստատեցին Ջերմուկի հանքային ջրերի բուժական անժխտելի կարևորությունը և տեղում առողջարան կառուցելու անհրաժեշտությունը

Հայկական ԽՍՀ սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարիատը 1936 թ Ջերմուկում սկսեց կառուցել առողջարանային առաջին, իսկ 1938 թ Արփայի ձորում լուսանքների 12 տեղանոց շենքը 1940 թ շահագործման հանձնվեց առաջին առողջարանը և փաստորեն սկսվեց Ջերմուկ առողջարանի ակտիվ գործունեությունը

Հետագա տարիներին Ջերմուկ առողջարանի զարգացման, կրա հեռանկարներին առնչվող հարցերով զբաղվեցին Հայաստանի, ինչպես նաև միութենական կառավարությունները. 1945 թ ԽՍՀՄ կառավարական հանձնաժողովը նկատի ունենալով հանքային ջրերի բուժական բացառիկ արդյունավետությունը, խնդիր դրեց Ջերմուկը դարձնել միութենական նշանակության առողջարան Անցան տասնամյակներ, Ջերմուկը հանձնաչելիորեն փոխեց իր դեմքը. կառուցվեցին առողջարաններ, պոլիկլինիկաներ, հիվանդանոց, հանքային ջրերի ըմպելիատար, հանքային ջրերի գործարան, լուսավորության, կանկարական, կենցաղային սպասարկման հիմնարկներ և այլն:

Ջերմուկը 1967 թվականի մարտի 24-ին դասվեց հանրապետական ենթակայության քաղաքների շարքին, իսկ ԽՍՀՄ Այլընտրանքների խորհրդի 1970 թ. օգոստոսի 28-ի որոշմամբ ստացավ համամիութենական նշանակության առողջարանի կարգավիճակ

Այդ որոշումներից հետո աննախընթաց զարգացում է ապրել Ջերմուկ քաղաք-առողջարանը Այսօր շատ են ընդարձակվել նրա տարածքի սահմանները, այն դարձել է հանրաճանաչ առողջարան-քաղաք Մարդիկ գալիս են ամենազանազան քաղաքներից ու բնակավայրերից բուժվելու և հանգստանալու

ՄԵԿ ՊՏՈՒՅՏ ՋԵՐՄՈՒԿՈՒՄ

Իսկ այժմ հրավիրում ենք զբոսնել Ջերմուկի փողոցներով, շնչել շրջապատի ալպիական ծաղիկների անուշ բուրմունքը, լինել մշակույթի օջախներում, վայելել լեռնային քաղաքի քաղցրահամ ջուրը, լսել թռչունների հոգեթով համերգն ու մոտիկից ծանոթանալ այս շենջող քաղաքի կյանքին:

«ՅԱԿ—40» օդային լայները Ջերմուկի երկնքում է: Օդանավի լուսամուտից, ինչպես ասիիդ մեջ, երևում է քաղաք-առողջարանը իր աջ ու ձախ ասիերով, անտառներով ու լճերով, անդրնդայտոր կիրճերի, լեռների պոնկին ու լանջերին կառուցված շինություններով:

Ջերմուկը Հայկական ԽՍՀ-ի ամենախոշոր առողջարանն է: Քաղաք-առողջարանի ընդհանուր տարածքը կազմում է 2100 հեկտար, որից 400-ը առողջարանային գոտին է, 1600-ը՝ անտառածածկ տարածք, իսկ աջ ու ձախ ասիերի բնակելի զանգ-

վածները փոփոխված են մոտ 100 հեկտար տարածության վրա։ Այժմ քան երբեք շարունակում է տարածվել քաղաք-առողջարանը՝ ընդարձակելով իր սահմանները Ազգաբնակչության թիվը 1990 թ հունվարի 1-ի տվյալներով կազմում է 10500 մարդ։

Ինքնաթիռը փափուկ վայրէջք է կատարում «Ջերմուկ» օդանավակայանի թռիչքային դաշտում, որը քաղաքի գլխավոր դարպասն է Ծովից ավելի քան երկու հազար մետր բարձրության վրա ենք Օդանավակայանի շրջակայքում հուրհրում են սիգամարգերը, պես-պես ծաղիկները Ջերմուկյան թափանցիկ օդի հայելու մեջ պարզորոշ երևում է թրթուռն ու ցողապատ կանաչի կրկնապատկերը Ամեն ինչ այստեղ պարզ է ու մաքուր, ինչպես կոունկի աչքը։

Ջերմուկի օդանավակայանը գտնվում է Չախափի հարթ տարածության վրա։ Առաջին օդանավը այստեղ վայրէջք է կատարել 1953 թվականի օգոստոսին Այդ ժամանակ ԱՆ—2 մակնիշի ինքնաթիռը 10—12 ուղևորների Երևանից Ջերմուկ հասցրեց 40—45 րոպեի ընթացքում։ Դրվեց Երևան—Ջերմուկ, Ջերմուկ—Երևան օդային մշտական հաղորդակցության հիմքը 1976 թվականից Ջերմուկ են թռչում ՅԱԿ—40 ինքնաթիռները, որոնք ուղևորներին տեղ են հասցնում 20—25 րոպեում։

Չախափը փաստորեն քաղաք-առողջարանի բնակելի խոշոր զանգվածն է, ուր վեր են խոյացել տասնյակ բնակելի շենքեր, դպրոցներ, մսուր-սանկապարտեզներ, առևտրական և հասարակական սննդի օբյեկտներ։

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1988 թվականի «Ջերմուկ առողջարանի հետագա զարգացման միջոցառումների մասին» ընդունած որոշմամբ նախատեսվում է ընդարձակել Չախափը, այստեղ տեղափոխել Արփայի Աջափի բնակիչներին, իսկ ազատված բնակարանները և մյուս տարածությունները վերակառուցել և դարձնել բուժական մասնաշենքեր։

Այդ նույն որոշմամբ Աջափից և առողջարանային գոտուց հանվելու են արդյունաբերական ձեռնարկությունները, շինարարական, տրանսպորտային և այլ կազմակերպությունները։ Այստեղ կառուցվելու են բնակելի նոր տներ, դպրոցներ, մանկապարտեզներ, պիոներական տուն, հիվանդանոց, հյուրանոց, կի նոթատրոն և այլ սոցիալ-մշակութային օբյեկտներ։

Չախափի հարևանությամբ Կեչուտ գյուղն է, Վայոց օրի հնագույն բնակավայրերից մեկը, որը միացված է Ջերմուկ քա-

ղաքին և գտնվում է նրա վարչական կազմում՝ Կեչուտը կաթ-
նաանասնապահական սովխոզ է, շրջանի առաջավոր տնտե-
սություններից մեկը, որն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի
տուն, մանկապարտեզ, առևտրի և կենցաղի տներ Գյուղի կենտ-
րոնում կանգնեցված է մեծ Հայրենականում զոհված համա-
գյուղացիների հիշատակը հավերժացնող հուշարձանը՝

Ձախափում կան նաև այլ օբյեկտներ, որոնցից է «Սյունիք»
Ռեստորանը՝ Նրա գեղեցիկ, կլոր, ընդարձակ դահլիճը միշտ
ողողված է լույսով ու մաքրությամբ: Այստեղ մարդիկ ճաշա-
կում են ազգային համեղ խորտիկներ, լսում երաժշտություն:
Ռեստորանը տեղացիների և հյուրերի ժամանցի, հանգստի հա-
ճելի վայրերից մեկն է

«Սյունիքի» կողքին քաղաքի կապի հանգույցի եռահարկ
շենքն է, որը հիմնադրվել է 1954 թ.: Այն հագեցված է կապի
Նորագույն միջոցներով. Քաղաքը սպասարկվում է հեռախո-
սային երկու հազար համարով, որոնք ավտոմատ կապ են հաս-
տատում ինչպես շրջանի, այնպես էլ հանրապետության և
Միության տարբեր քաղաքների հետ

Կապի բաժանմունքի հարևանությամբ գործում է նաև տու-
րիզմի և ճանապարհորդությունների քաղաքային բաժանմուն-
քը, որն այսօր տեղավորված է բնակելի շենքի փոքրիկ մի
տարածքում: Առաջիկայում շենքը վերակառուցվելու և դառնա-
լու է տուրիզմի և էքսկուրսիաների խոշոր բազա՝ իր հանգրվան-
ներով և օժանդակ այլ հարմարություններով: Նախատեսվում է
հենց այստեղ, բազայի կողքի հարթ տարածության վրա, կա-
ռուցել ճոպանուղու կայարան, որի լարերը կծգվեն կիրճի և
քաղաքի վրայով, կհասնեն մինչև «Ջերմուկ» հյուրանոցի հան-
դիպակաց լեռան գագաթը և կշարունակվի ևս չորս-հինգ կի-
լոմետր. ճոպանուղու շահագործումը դրականապես կնպաստի
լեռնադահուկային սպորտի զարգացմանը, իսկ օդային վագո-
նիկներով երթևեկելիս մարդիկ կվայելեն Արփայի կիրճի և նրա
շրջակայքի գեղեցկությունն ու հմայքը:

Օդանավակայանից ուղղություն ենք վերցնում դեպի Աջափ՝
դեպի քաղաք-առողջարանի կենտրոն: Ասֆալտապատ մայրու-
ղու երկու կողմերում մշտականաչ եղևնիներ են, ծառեր ու
երփներանգ ծաղիկներ: Մենք կիրճի մոտ ենք: Մինչև կամուրջ
հասնելը, կլոր հրապարակում կարդում ենք հետևյալ գրառու-
մը. «Այստեղ կանգնեցվելու է Իսրայել Օրու հուշարձանը»:

Իսրայել Օրին ծնվել է Ջերմուկից ոչ հեռու Վայքի լեռնաշղթայի հյուսիսային լանջին փոփած Մարտիրոս գյուղում: Գյուղամիջում այսօր էլ կանգուն է 1283 թ Պոռշ իշխանների հրամանով կերտված գեղաքանդակ հուշարձան խաչքարը: Այստեղ կան գերեզմաններ և խաչքարեր VIII—XIII դդ. թվագրությամբ: Գյուղից չորս կիլոմետր հարավ-արևելք Ս Աստվածածին վիճափոր վանքն է՝ կառուցված 1286 թ. (ճարտարապետ՝ Գրիորիկ) Սակայն շատերն այս գյուղը ճանաչում են որպես հատարակական-քաղաքական ակտիվ գործիչ, մեծ դիվանագետ Իսրայել Օրու ծննդավայր:

Իսրայել Օրի (1659—1711): Հայաստանի ազատագրության խնդրով 1677-ին Էջմիածնի գաղտնի ժողովում ընտրված պատվիրակների և հոր՝ Մելիք Իսրայելի հետ 1679 թ. մեկնել է Կ Պոլիս Հետագայում Ի. Օրին եղել է աշխարհի զանազան երկրներում՝ Ֆրանսիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Ավստրիայում, Իտալիայում, սակայն Հայաստանի ազատագրության հարցը լուծելու վերաբերյալ նրա դիվանագիտական բանակցությունները հաջողություն չեն ունեցել: Բավական է ըշել, որ Իսրայել Օրին իր գործունեության ընթացքում ստիպված եղավ Պրանսիայում անցնել զինվորական ծառայության և մասնակցել 1688, 1695 թթ անգլո-ֆրանսիական պատերազմին: Ի. Օրին, որն այդ ժամանակ կապիտան էր, 1698-ին Հոլանդիայի Պֆալցի Հովհան Վիլհելմին ներշնչել է Հայաստանը նվաճելու, նրա թագավորը դառնալու միտքը: Վիլհելմը համաձայնել է և Ի. Օրու միջոցով պաշտոնական նամակներ հղել հայ մելիքներին, տոկոսային հայոց և աղվանաց կաթողիկոսներին և խնդրել է մտերամասն տեղեկություններ հաղորդել Հայաստանի և նրա հարակից երկրների տնտեսական, քաղաքական և ռազմական սրայմանների մասին Սակայն Օրու այս անհեռանկար ձեռնարկուսնր ոչ ոք չարձագանքեց Հետագայում Ի Օրու ջանքերով ու Սելիք Սաֆրազի օժանդակությամբ Անգեղակոթ ավանում (Սիսիանի գավառ) Սյունիքի տասնմեկ մելիքների մասնակցությամբ գումարված խորհրդաժողովում մի նամակ է կազմըվում, որը հասցեագրվում է Հովհան Վիլհելմին, Հոռմի Պապին, Ավստրիայի կայսրին, Ռուսաց ցար Պետրոս Մեծին և այլոց Հայաստանի ազատագրության գործին սատար լինելու խընդրուսնքով Դիվանագիտական իր անդու, անձնագորհ ու հետևույսկան գործունեությամբ Ի. Օրին տևական դեգերումներից հե-

տո առաջինն էր, որ սկզբնավորեց հայ ժողովրդի ազատագրության ոռւսական կողմնորոշումը Պետրոս Մեծը 1701 թ ընդունել է Իսրայել Օրթւն և Մինաս Կարդապետին Հետագայում Իսրայել Օրթւն շնորհել է ոռւսական բանակի գնդապետի աստիճան, նշանակել դեսպանության ղեկավար և ուղարկել Պարսկաստան. 1711 թ. Աստրախանում Ի Օրին մուլթ հանգամանքներում հանկարծամահ է եղել

Իսրայել Օրու գաղափարները տեսականորեն առաջնորդեցին հայ ազատագրական միտքը, դարձան հայ ազգային ազատագրական պայքարի լուսատու փարոսը

Ահա և մետաղական կամարաթռիչք հայտնի կամուրջը, որը իրար է միացնում Արփայի երկու ափերը՝ քաղաքի աջ և ձախ մասերը կապում միմյանց. Այս կամուրջը շահագործման է հանձնվել 1972 թ վերջին (նախագծի հեղինակ՝ Ա Խոմսկի). Կամուրջի թռիչքի երկարությունը 225 մ է, բարձրությունը գետի ջրի մակարդակից՝ մոտ 100 մ: Դժվար է բառերով նկարագրել այն զգացումը, որ պատում է մարդուն կամրջի վրայից ցած նայելիս: Հայացքիդ առաջ փոփում է վիթխարի, աւընդ-գըրկելի ու անհատակ կիրճը, որի կենտրոնով հոսում է փրփրաբաշ Արփան: Տեսարանը հմայիչ է, միաժամանակ զարհուրելի:

Ետևում ենք թողնում ծիածանակերպ կամուրջն ու ձախ ափը և ոտք դնում բուն ջերմուկյան հինավուրց հողին: Կամրջի ձախ կողմում ԽՍՀՄ առողջապահության մինիստրության «Արարատ» առողջարանի (ճարտարապետ՝ Մ. Միքայելյան) բազմահարկ քարակերտ շենքն է: Այն շահագործման է հանձնվել 1983 թ. վերջին: Այս առողջարանում տարեկան հանգըստանում և բուժվում են ավելի քան 35000 մարդ: «Արարատ» առողջարանը Ջերմուկի առաջնակարգ առողջարաններից է, որի բուժական սենյակները, լաբորատորիաները կահավորված են հայրենական և արտասահմանյան ժամանակակից նորագույն տեխնիկայով, բժշկական ճշգրիտ սարքավորումներով ու հարմարանքներով: Այստեղ բուժվողների և հանգստացողների համար ստեղծված են լավագույն պայմաններ. կան տարբեր խաղահրապարակներ, ակումբ ու գրադարան, կինոդահլիճ:

Առողջարանի աշխատողների և հանգստացողների ուժերով հաճախ կազմակերպվում են երգ ու երաժշտության, ասմունքի երեկույթներ և ցերեկույթներ:

ժամանակակից այս հարմարավետ շենքի ննջասենյակներին կից պատշգամբներից յուրաքանչյուրը հրաշալի մի դիտակետ է մի կողմից երևում է քաղաքային զբոսայգին իր բազմերանգ գույներով, լճերով, իսկ մյուս կողմից՝ Արփայի վիթխարի կիրճի հրաշալի տեսարանը.

«Արարատ» առողջարանը գիտագործնական կապեր ունի ՀԽՍՀ առողջապահության մինիստրության Երևանի կուրորտաբանության և ֆիզիոթերապիայի գիտահետազոտական ինստիտուտի հետ: Հաճախ ինստիտուտի մասնագետները լինում են «Արարատ» առողջարանում և այնտեղ ներդնում կուրորտաբանության նորագույն նվաճումները: «Արարատ» առողջարանի հանդիպակաց մասում է տեղավորված Հայկական ԽՍՀ առողջապահության մինիստրության Չորրորդ գլխավոր վարչության «Ջերմուկ» առողջարան-համալիրը: Այն իր առաջին հանգստացողներին ու բուժվողներին ընդունել է 1976 թ. հուլիս ամսից: Առողջարանում տարեկան բուժվում և հանգստանում են 3120 մարդ. իր գոյության 13 տարիների ընթացքում այս հոյակերտ շինության կամարների տակ իրենց հանգիստն են վայելել, կազդուրվել ավելի քան 40 հազար մարդ:

Առողջատանը գործում են ժամանակակից սարքավորումներով պրոցեդուրային կաբինետներ՝ լոգանքների, էլեկտրալուսաբուժական, ջրաբուժական, էլեկտրատորֆի, էնդոսկոպիական, ռենտգենի, բուժական ֆիզկուլտուրայի և այլն:

Առողջարանի մանրակերտ աստիճանները նորեկին տանում են տարբեր ուղղություններով՝ դեպի ննջասենյակներ, ընդարձակ ճաշարան, լողավազան, բուժական ֆիզկուլտուրայի դահլիճ և այլուր, իսկ երբ մայր է մտնում ջերմուկյան վառարկը, նրանք ուղղություն են վերցնում դեպի կինոդահլիճ, խաղահրապարակներ, պարասրահ, ոմանց ձգում են ջերմուկյան հետաքրքիր ճեմուղիները, ըմպելասրահը, սրճարանները:

Առողջարանային այս համալիրը կառուցված է բարձր ճաշակով Այստեղ հարմարավետ են ննջասենյակները, աչք են շոյում կահավորանքը, հատակին փռված գորգերն ու ուղեգորգերը իսկ ձմեռային այգում մշտականաչ ծառ ու ծաղիկներ են օդը՝ գարնանաբույր

Առողջատան բժշկական կոլեկտիվը գիտագործնական սերտ կապերի մեջ է Մոսկվայի Սեչենովի անվան առաջին բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնի գիտնա-

կանների հետ, որոնց առաջավոր փորձը ներդրվում և իրականացվում է տեղում՝ Ջերմուկում:

«Ջերմուկ» և «Արարատ» առողջատների շարքում, Շահումյան փողոցի վրա, տեղավորված է Ջերմուկի հնագույն բուժ-հիմնարկներից մեկը՝ ՀԽՍՀ առողջապահության մինիստրության Երրորդ առողջատունը:

Բազալտակերտ խորաքանդակներով ու նրբին զարդաքանդակներով հարուստ, հայկական դասական ճարտարապետության կառուցածքներին հարազատ այս համալիրը շահագործման է հանձնվել 1950-ական թվականներին, ուր տարեկան բուժվում և իրենց առողջությունն են վերականգնում շուրջ 2500 մարդ:

Շահումյան փողոցով քայլում ենք դեպի քաղաքի կենտրոն: Փողոցը նման է հրաշալի մի պարտեզի: Ճանապարհի երկու կողմերում սլացիկ բարդիների ուղղաձիգ շարքն է, գազոններում բազմագույն ծաղիկներ: Ահա կամարակապ, քարակերտ կամուրջը: Լեռների կիրճերից ու լանջերից բխած սառնորակ այն աղբյուրների պաղպաջուն ջրերն են, որոնք իրար միանալով դառնում են հորդառատ մի գետ և, քարե կամրջի տակից հոսելով, հասնում ժայռագագաթ, իսկ այնտեղից գահավիժում ցած՝ 84 մետր խորությամբ ձորը: Հրաշք մի տեսարան, որին նայելիս մարդը կտրվում է աշխարհից:

Կամուրջից այն կողմ հիմնականում բնակելի տներ են, հասարակական սննդի օբյեկտներ, դեղատուն, փոստ, գրախանութ, բաղնիք և այլն: Գրախանութի շարքում է գտնվում աշխարհաճանաչ մանրակարիչ, Խորհրդային Միությունում այդ դպրոցի հիմնադիրներից մեկի՝ Էդուարդ Տեր-Ղազարյանի յշտական գործող ցուցահանդեսը: Այստեղ բազմաթիվ ցուցանմուշներ կան, որոնք հավաստում են տաղանդավոր արվեստագետի փայլուն շնորհքի մասին: «Աղջիկների պարը» — թզի կորիզի կես հատիկի վրա տեղավորված է 8 հոգուց բաղկացած հայկական տարազով ոսկուց պատրաստված աղջիկների էստրադան, «Չարի Չապլին» — աշխարհում ամենափոքրիկ քանդակը, հանճարեղ դերասանի արձանը մանրակարիչը կանգնեցրել է ասեղի անցքում:

Այստեղ է տեղավորված Ջերմուկի քաղաքային խորհրդի գործկոմի շենքը, որի գագաթին ծածանվում է Հայկական ԽՍՀ-ի պետական դրոշը: Գործկոմի շենքի կողքին գեղարվես-

տի մանկական դպրոցն է, որտեղ երեխաներին ուսուցանվում է երաժշտություն, պարարվեստ ու գեղանկարչություն: Դպրոցը հիմնադրվել է 1969—1970 թվականներին:

Ջերմուկում յուրաքանչյուր տարի բուժվում և հանգստանում են 25—30 հազար մարդ և, բնականաբար, այստեղ խիստ կարևոր է ազգաբնակչության կենցաղային սպասարկումը, ամենազանազան ծառայությունների բարձր մակարդակով կազմակերպումը: Քաղաքային խորհրդի գործկոմի հարևանությամբ դեղնավարդագույն բազմահարկ շենքը Ջերմուկ քաղաքի ազգաբնակչության կենցաղսպասարկման կոմբինատի համալիրն է: Կոմբինատը քաղաքի տարբեր հատվածներում ունի սպիտակեղենի լվացման մեքենայացված, հագուստի քիմիական մաքրման ֆաբրիկաներ, տրիկոտաժային պատվերների սալոն, լուսանկարչատներ և այլ ծառայություններ:

Մյասնիկյանի փողոցը մեզ տանում է դեպի «Ջերմուկ» հյուրանոց (ճարտարապետ՝ Ջ. Բախշինյան): Քառահարկ հյուրանոցը, որն ունի հարմարավետ սենյակներ, կարող է սպասարկել 210 մարդու: Հյուրանոցն ունի ռեստորան, բուֆետ և այլ հարմարություններ: Շենքի առջևի փոքրիկ հարթակից այն կողմ եզերվում է քաղաք-առողջարանի գեղանի տարածքը, գետը տանող գառիվայր լանջքով:

Հենց հարթակի մոտից սկսվում է հետաքրքիր մի ճամուղի: Շուրջ երկու կիլոմետր ձգվող աստիճանաձև այս ճանապարհը գետի ափով մարդկանց տանում է մինչև շառաշուն ջրվեժը, այնուհետև միանալով ասֆալտապատ ճանապարհին, դուրս գալիս քաղաքի մյուս կողմը:

«Ջերմուկ» հյուրանոցի աջ կողմի ճանապարհը Արփայի ափով, թավուտ անտառների, ծառ ու ծաղիկների ուղեկցությամբ տանում է դեպի «Էլեկտրոն» պանսիոնատ: Մեր առջև բացվում է Կեչուտի ջրամբարի տեսարանը: Արփայի ջրերը այստեղ հսկայածավալ մի լիճ են ստեղծել, ուր կուտակվում է շուրջ երեք միլիոն խորանարդ մետր ջուր: Այստեղից ջուրը 49 կմ երկարություն ունեցող թունելով հոսում ու թափվում է Սևանա լիճը: Մինչև 1990 թվականի վերջերը շահագործման կհանձնվի Որոտան—Արփա 21 կմ երկարությամբ թունելի շինարարությունը և տարեկան Կեչուտի ջրամբար կլցվի ջուրը 230 միլիոն խորանարդ մետր ջուր, որը նույնպես կհոսի դեպի Սևանա լիճ, բարձրացնելով նրա մակարդակը 5—6 մետրով:

Հենց այստեղ՝ Կեչուտի ջրամբարի ափին փոփած են «Էլեկտրոն» պանսիոնատի մասնաշենքերը և նրա զանազան օժանդակ տնտեսությունները Պանսիոնատը շահագործման է հանձնել 1980 թվականին:

Անցած տարիներին շարք են մտել նոր մասնաշենքեր: Պանսիոնատը ընդարձակել է իր սահմանները և այսօր նա ամսեկան ընդունում է ավելի քան 250 հանգստացողների, ուրոնցից շատերն ստանում են նաև անհրաժեշտ բուժում:

Հին ճանապարհը կիրճի գեղատեսիլ կեոմաններով գնում, միանում է Վայքից դեպի Սիսիան—Գորիս տանող մայրուղուն Չորամիջյան ճանապարհի ձախ կողմի լեռնալանջին վերորեն կանգնած է Գնդեվանք եկեղեցին:

